



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

1.4 (30)

Общественные и гуманитарные науки

(Богословие, востоковедение, литературоведение, правоведение, журналистика, языкознание, педагогика, история, социология, экономика и управление, философия и психология, политология и международные отношения)

Humanities and Social Sciences

(Theology, Oriental Studies, Literary Studies, Jurisprudence, Journalism, Linguistics, Pedagogy, History, Sociology, Economics and Management, Philosophy and Psychology, Political Science and International Relations)

ЕРЕВАН - YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS
2019

ԵՊՀ ՌԻԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1.4 (30)

Հասարակական և հումանիտար գիտություններ

(Աստվածաբանություն, արևելագիտություն, գրականագիտություն, ժուռնալիստիկա, իրավագիտություն, լեզվաբանություն, մանկավարժություն, պատմություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն և կառավարում, փիլիսոփայություն և հոգեբանություն, քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ)

Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издаётся по решению Ученого совета ЕГУ
Published by the Resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

բ.գ.դ., պրոֆ. Դ. Պետրոսյան
բ.գ.դ., պրոֆ. Լ. Մաթևոսյան
բ.գ.դ., պրոֆ. Յու. Ավետիսյան
բ.գ.դ., պրոֆ. Ս. Մուրադյան
բ.գ.դ., պրոֆ. Վ. Հարությունյան
հ.գ.դ., պրոֆ. Հ. Ավանեսյան
պ.գ.դ., պրոֆ. Ս. Մկրտչյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Մնացականյան
տ.գ.դ., պրոֆ. Հ. Սարգսյան
ք.գ.դ., պրոֆ. Գ. Քեոյան
բ.գ.դ., դոց. Շ. Պարոնյան
բ.գ.թ., դոց. Ն. Վարդանյան
բ.գ.թ., դոց. Վ. Եղիազարյան
տ.գ.թ., դոց. Կ. Խաչատրյան
բ.գ.թ., ասիստ. Ն. Պողոսյան
ի.գ.թ., ասիստ. Վ. Գրիգորյան
ի.գ.թ., ասիստ. Տ. Սուջյան
ի.գ.թ., ասիստ. Ա. Թավադյան
հ.գ.թ., ասիստ. Դ. Սարգսյան
պ.գ.թ., ասիստ. Ռ. Կարապետյան
փ.գ.թ., ասիստ. Կ. Յարալյան

Редакционная коллегия:

д.ф.н., проф. Д. Петросян
д.ф.н., проф. Л. Матевосян
д.ф.н., проф. Ю. Аветисян
д.ф.н., проф. А. Мурадян
д.ф.н., проф. В. Арутюнян
д.п.н., проф. Г. Аванесян
д.и.н., проф. С. Мкртчян
д.э.н., проф. А. Мнацаканян
д.э.н., проф. А. Саргсян
д.п.н., проф. Г. Керян
д.ф.н., доц. Ш. Паронян
к.ф.н., доц. Н. Варданын
к.ф.н., доц. В. Егиазарян
к.э.н., доц. К. Хачатрян
к.ф.н., ассист. Н. Погосян
к.ю.н., ассист. В. Григорян
к.ю.н., ассист. Т. Суджян
к.ю.н., ассист. А. Тавадьян
к.п.н., ассист. Д. Саргсян
к.и.н., ассист. Р. Карапетын
к.ф.н., ассист. К. Яралян

Editorial Board

DSc, Prof. D. Petrosyan
DSc, Prof. L. Matevosyan
DSc, Prof. Y. Avetisyan
DSc, Prof. S. Muradyan
DSc, Prof. V. Harutyunyan
DSc, Prof. H. Avanesyan
DSc, Prof. S. Mkrtchyan
DSc, Prof. H. Mnatsakanyan
DSc, Prof. H. Sargsyan
DSc, Prof. T. Keryan
DSc, Associate Prof. Sh. Paronyan
DSc, Associate Prof. N. Vardanyan
DSc, Associate Prof. V. Yeghiazaryan
PhD, Associate Prof. K. Khachatryan
PhD, Assistant Prof. N. Poghosyan
PhD, Assistant Prof. V. Grigoryan
PhD, Assistant Prof. T. Sujyan
PhD, Assistant Prof. A. Tavadyan
PhD, Assistant Prof. D. Sargsyan
PhD, Assistant Prof. R. Karapetyan
PhD, Assistant Prof. K. Yarlyan

Գասպարյան Ռուզաննա

ԵՊՀ, ՀՀԻ լաբորանտ, ցեղասպանագիտության մագիստրոս
Գիտական ղեկավար՝ պ.գ.թ., դոց. Մ. Հովհաննիսյան
Էլ. փոստ՝ r.gasparyan94@gmail.com

1918 Թ. ԲԱՔՎԻ ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾԸ ՈՐՊԵՍ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ

1918 թ. սեպտեմբերին Բաքվում տեղի ունեցած հայերի ջարդերի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ պանթուրքիզմի իրագործման շրջանակներում թուրքական բանակի առաջխաղացման համար պատրվակ է դարձել իշխանության համար ընթացող բոլշևիկ-մուսավաթի քաղաքական պայքարը [1]՝ քողարկված կրոնական և էթնիկ տարածայնություններով: Չնայած այդ հանգամանքին՝ եռօրյա մարտերի ընթացքում Բաքվի Հայոց ազգային խորհուրդը բոլշևիկներից թաքցրեց և ապաստան տվեց 20 հազար թաթարի (13 հազարին՝ հասարակական շենքերում, 7 հազարին՝ սեփական տներում) [2]:

Մարտի 30-ին, 31-ին և ապրիլի 1-ին տեղի ունեցած զինված բախումները ներկայացվեցին որպես հայ-թաթարական ընդհարումներ, իսկ թուրքերը, օգտվելով առիթից, արագացրին առաջխաղացումը՝ [3, 2, 13]: Մայիսին «մուսուլմաններին վտանգից փրկելու համար» Գյանջայում (Գանձակ) ձևավորվեց Իսլամական բանակ, որին հաջորդեց «Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետություն» արհեստածին պետության կազմավորումը: Այդ առիթով 1923 թ. ռուս հասարակական գործիչ, երկար տարիներ Բաքվում ապրած, դեպքերին քաջածանոթ Բ. Բայկովը գրել է. «Նորայթուխ Ադրբեջանի Հանրապետության կառավարությունը բռնությունները դարձրեց նպատակային՝ բարձրացրնելով պետական մակարդակի. պատերազմ հայտարարվեց հայությանը» [4]:

Մեծ Թուրանի ստեղծման ճանապարհին Անդրկովկասում տիրող իրավիճակը՝ Սեյմի փլուզումը, Մայիսյան հերոսամարտերում թուրքական բանակի կրած պարտությունը և հանրապետությունների անկախացումը, արագացրին Օսմանյան բանակի արշավանքը Բաքու:

Թուրքական կողմն ի վերջ հասավ ցանկալի արդյունքի. այլևս չքողարկելով Իսլամական բանակի անվան տակ՝ թուրքական կանոնավոր բանակն էնվերի տարած

¹ Խորհրդային իշխանության և մուսավաթի միջև եռօրյա մարտերն ավարտվեցին մարտի 20-ին (ապրիլի 2)՝ մուսավաթի պարտությամբ: Պարագլուխների մեծ մասը փախավ Ելիզավետպոլ, ոմանք էլ թաքնվեցին ադրբեջանական քաղաքամերձ գյուղերում: Երկու կողմից ընդհանուր ազումամբ զոհվեց 3000-ից ավելի մարդ: Տարբեր տվյալների համաձայն՝ սպանվել էր 700-2000 թաթար, 300-1200 բոլշևիկներ (ռուսներ ու հայեր): Հայոց ազգային խորհուրդն այդ օրերին փրկել էր նավթարդյունաբերողներ Հ. Թադիևին և Շ. Ասադուլանին, իսկ Ստ. Շահումյանը՝ Բեհբութ խան Ջիվանշիրին, ով վեց ամիս անց իր «Երախտագիտությունը» հայտնեց հայերին:

աշխատանքներից և համալրումներից հետո հարձակման անցավ Բաքվի ուղղությամբ:

1918 թ. մայիսին Գանձակում Ադրբեջանի կառավարության և «Մուսավաթ» կուսակցության գործիչների գաղտնի խորհրդակցության ժամանակ մշակվեցին Նուխիի, Արեշի, Գյոքչայի, Շամախիի և Բաքվի գավառների հայերի կոտորածների ծրագրեր [5]: Հայկական կողմի գլխավոր խնդիրն էր բացել Բաքու-Թիֆլիս ճանապարհը և ազատել Գյոքչայի, Արեշի, Նուխիի և Շամախու գավառների հայ բնակչությանը թուրք-թաթարական հալածանքներից, այնուհետև անցնել Հայաստան և օգնել թուրքերի դեմ կռվող Հայկական կորպուսին:

Անգլիայի արտաքին գործերի նախարար Ռ. Սեսիլը գրել է, որ թուրքերն ավելի շուտ կհասնեին Բաքու, եթե հայերը չդիմադրեին [6]: Օսմանյան կայսրությունը ձգտում էր տիրանալ Բաքվի նավթին, ապա անցնել Հյուսիսային Կովկաս, այնտեղից՝ Միջին Ասիա և ստեղծել թուրքական մեծ պետություն, որով պետք է իրագործվեր համաթյուրքականության (պանթյուրքիզմ) ծրագիրը [7]: Բաքվի դեմ արշավանքով փորձ էր արվում իրականացնել նաև համաթյուրքականության ծրագրով նախատեսված Օղուզական պետության ստեղծումը, որով Սև ծովից մինչև Կասպից ծով (Բաթումից Բաքու) ընկած տարածքում Օսմանյան կայսրության խնամակալության ներքո նախատեսվում էր ստեղծել «Մեծ Ադրբեջան» նոր պետությունը՝ թուրքական պետությունը կամրջելով Կովկասի և Միջին Ասիայի թյուրքախոս ժողովուրդների հետ [8]:

Ոչնչացնելով Բաքվի և Ելիզավետպոլի հայկական գյուղերը (օրինակ՝ Նուխիում և Արեշում 51 գյուղից 48-ը ոչնչացվեց, ընդհանուր՝ 40.000 բնակչությամբ [9, 2])՝ թուրք-մուսավաթական ուժերը պաշարեցին Բաքու քաղաքը, որտեղ ապրում էր գրեթե 90.000 հայ բնակչություն:

1918 թ. սեպտեմբերի 15-17-ը Բաքու քաղաքում (մինչ այդ՝ Բաքվի նահանգում) թուրքական կանոնավոր բանակը և թաթարական հրոսակախմբերը շարունակեցին Արևմտյան Հայաստանում սկսված և Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում իրականացված հայերի ցեղասպանությունը: Կատարվածի ամբողջ պատասխանատվությունը և հետևանքների հաղթահարումը դաշնակից տերությունները դեռևս 1918 թ.-ին դրեցին Օսմանյան կայսրության վրա: 1918 թ. դեկտեմբերին Անգլիան, Ֆրանսիան և ԱՄՆ-ն Բաքվում ստեղծեցին «Դաշնակից տերությունների վերստուգիչ հանձնաժողով»: Այն բնույթով պաշտոնական էր, միջազգային, կազմը ինտերնացիոնալ էր (ընդգրկված էին ընդամենը 7 հայեր): Հանձնաժողովը Բաքվի բնակչությանն առաջարկեց ներկայացնել ցուցակ-նախահաշիվներ՝ վերջնաժամկետ սահմանելով փետրվարի 15-20-ը: Այդ առումով կարևոր է Վրաստանում ՀՀ ներկայացուցիչ Ջամալյանի՝ 1918 թ. նոյեմբերի 29-ին ՀՀ արտաքին գործերի նախարարին ուղարկած հեռագիրը, որը գեներալ Թոմսոնի՝ նոյեմբերի 21-ին Նուրի փաշային ուղղված հետևյալ հեռագրի տեքստն էր. «*Բաքու ժամանելուն պես զեկույցներ են ստացվել օսմանյան զինվորների կողմից թալանի և ունեցվածքին հասցված վնասների մասին: Բաքվում Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Միացյալ Նահանգների ներկա-*

յացուցիչներից կազմվել է հանձնաժողով՝ ապացուցված վնասների ընդհանուր արժեքի գնահատումը հետաքննելու համար: Քանի որ ապագա գումարը պետք է փակվի Թուրքիայի հաշվին, Ձեզ գրում եմ, որպեսզի հնարավորություն ունենաք վերադարձնելու ունեցվածքը: Հայտնում եմ Ձեզ, որ անհրաժեշտություն ծագելու դեպքում կձևավորվեն այլ հանձնաժողովներ՝ բողոքները քննարկելու համար: Այդ իսկ պատճառով նպատակահարմար է Ձեզ և Ձեր գեներալներին տեղեկացնել սույն մտադրության մասին» [10]:

Այն, ինչ կատարվել է սեպտեմբերին հայերի հանդեպ (ի տարբերություն 1918 թ. մարտի 31-ից ապրիլի 2-ը տեղի ունեցած դեպքերի), իրագործվել է միակողմանի գործողությունների արդյունքում: Նշենք, որ միակողմանի գործողություն չի համարվում ահաբեկչությունն ու պատերազմական գործողության ժամանակ իրականացված ոմբակոծությունը: Վերջիններս չեն կարող դիտարկվել իբրև ցեղասպանություն, քանզի չեն հետապնդում խմբի նպատակաուղղված ոչնչացման սկզբնական փուլը [10]:

Ականատես, Օսմանյան բանակի գերմանացի սպա է. Պարակեն հայերի դեմ կատարվածի մասին գեներալ-լեյտենանտ Ֆոն Ջեքթիին գրել է. «Գազանությունները մեծամասամբ կատարվում էին տների ներսում: Այդ պատճառով փողոցներում համեմատաբար քիչ դիակներ կային: Դրանք գերազանցապես անկյուններում էին դարսված, այնպես որ հաճախ միայն հոտից կարելի էր իմանալ: Մի տեղում ես իրար վրա դարսած 7 դիակ տեսա, այդ թվում մի քանի երեխա... Գրեթե բոլոր դիակները ծածկված էին կապտուկներով, որոնք առաջացել էին հրացանների խզակոթների հարվածներից և խողխողումներից: Նկուղներից դիտարկել էր փշում» [11]:

Պարաքվինի՝ ականատեսի աչքով հաղորդած վկայությունները ուշագրավ մանրամասներ են հայտնում Բաքվում կատարվող իրադարձությունների վերաբերյալ՝ միաժամանակ փաստելով, որ այնտեղ հայերի կոտորածը նախապատրաստված էր և իրագործվում էր թուրքական կանոնավոր բանակի՝ Նուրի փաշայի և նրա զինվորականության աջակցությամբ. «...Մի գերմանացի ինձ պատմեց, որ նա Նուրի փաշայի համհարզի հետ մտել է մի տուն, որտեղ, առանց տարիքի և սեռի խտրության, սպանված ընկած էին 13 վրացիներ: Երբ նա մատնանշել է, որ նրանք վրացիներ, այսինքն՝ Գերմանիայի պաշտպանյալներ էին, ստացել է հետևյալ պատասխանը. «նրանց համարել են հայեր» [2, 12]:

Բաքվում հայերի ջարդերի վերաբերյալ առկա են բազմաթիվ վկայություններ [9]: «Չինայվեցին նույնիսկ հիվանդանոցներում գտնվողները: Միայն Բալախանի հիվանդանոցում սրախողխող արվեց 360 հիվանդ, իսկ Կոմենդանտսկի փողոցում գտնվող որբանոցի 63 երեխաներին փողոց էին նետել չորրորդ հարկից» [13]: Միսաք Թոռլաքյանի դատավարության ընթացքում հայկական որբանոցի տնօրեն Ա. Խանեղյանի տված վկայությունում ասվում է, որ կոտորածին զոհ են գնացել շուրջ 500 որբեր [14]:

Առկա փաստերը ցույց են տալիս, որ Բաքվի նահանգում հայերի կոտորածները (Ավ. Ահարոնյանը հուլիսի 20-ին գրած նամակում տեղեկացնում է, թե թուրքական

բանակի գործողությունների հետևանքով ինչ պայմաններում են գտնվել Երևանի, Դիլիջանի, Նոր-Բայազետի հայերը: Բացի այդ, տեղեկություններ կան նաև Ղարաքիլիսայի շրջանում 2000 հայերի մորթի մասին) [15] զանգվածային և պարբերական [10] բնույթ ունեին²: Վերջին բնութագրիչն ընկած է եղել Ռուանդայի ցեղասպանության հիմքում: Իզուր չէ, որ իրավաբան Վ. Շաբասը այն համարում է ցեղասպանության հատկանիշներ [16]: Այլ գործոնները, ինչպիսիք են՝ վայրագությունների զանգվածային կամ ընդհանուր բնույթն այս կամ այն շրջանում կամ երկրում, զոհերի նպատակային և համակարգված հետապնդումներն ըստ խմբի պատկանելիության, հնարավորություն են ընձեռում վերհանելու ցեղասպանության մտադրությունը [17]:

Բաքվի կոտորածը որոշ ընդհանրություններ ունի Արևմտյան Հայաստանում կատարվածի հետ: Նախ նշենք, որ նպատակը նույնն էր՝ Մեծ Թուրանի ստեղծման համար էթնիկ խմբի ոչնչացումը: Երկու դեպքում էլ առկա են երկրորդական շարժառիթներ՝ տնտեսական և կրոնական:

Կրոնական գործոն. Բաքվում մեծ թիվ էին կազմում մուսուլմանները (Այսրկովկասի թաթարները): Բացի այդ, Բաքվի մուսուլմանների շրջանում ազդեցիկ ուժ էր «Մուսավաթ» կուսակցությունը, որը հենարան դարձավ թե՛ քաղաքի գրավման, և թե՛ կոտորածի իրականացման գործում: Այս առումով կարելի է զուգահեռ անցկացնել 1995 թ. հուլիսին Սրեբրենիցա քաղաքում գետերալ Ռատկո Մլադիչի ղեկավարությամբ գործող սերբական բանակի գործողությունների հետ [18]:

Տնտեսական շահ. Ինչպես գիտենք, 1917 թ. նոյեմբերի 17-ի Բաքվի խորհրդի ընդլայնված նիստում վերացվել էր քաղաքապետությունը, իսկ նավթահանքային շրջանը միացվել էր քաղաքին [9, 19]: Բաքվի նավթը գրավիչ էր ոչ միայն Օսմանյան Թուրքիայի, այլև Խորհրդային Ռուսաստանի, Անգլիայի և Գերմանիայի համար [20]:

Արևմտյան Հայաստանում թուրքերին սատարում էին քրդերը: Բաքվում այդ դերը ստանձնել էին մուսավաթներն ու Այսրկովկասի թաթարները: Արևմտյան Հայաստանում հայերի բնաջնջումն իրականացնում էին «Թեշքիլաթը մահսուսե»-ի (Հատուկ կազմակերպություն) հրոսակախմբերը, Բաքվի նահանգում այդ նպատակով գործում էր «Ջալլադ քոմիթեսի» (Դահիճների կոմիտե) կազմակերպությունը: Երկու դեպքում էլ կոտորածից առաջ ձերբակալվեցին հայ մտավորականները:

Բաքվի դեպքերն ընդհանրություն ունեն Հոլոքոստի հետ, քանի որ հայրենիքի սահմաններից դուրս է իրականացվել ցեղասպանությունը, Ռուանդայի ցեղասպա-

² Ցեղասպանության որակական հատկանիշ է զանգվածային բնույթը: Այս դեպքում խոսքը ցեղասպանության զոհերի քանակի մասին չէ, որոնց հաշվարկման փորձերը գիտական տեսանկյունից անպտուղ են: Խնդիրն այլ է: Ցեղասպանության բովանդակային այն հատկությունը, որը հնարավորություն է տալիս տարբերակելու վերջինս հավաքական բռնության այլ դրսևորումներից՝ զոհի զանգվածային պիտակավորման և դասակարգման տրամաբանությունն է: Խոսքը սուբյեկտի կողմից իրավիճակի հայեցակարգման առանձնահատկությունների մասին է: Ցեղասպանության զոհի կերպարն անդեմ է և զանգվածային, քանզի պատկանելիությունը խմբին անհրաժեշտ և բավարար հիմք է իրականացնող սուբյեկտի համար, որ ոչնչացման թիրախ որակվի և պիտակավորվի:

նության հետ՝ հաշվի առնելով Ռուանդայի միջազգային քրեական դատարանի դատական պալատի Ակայեսուի գործով վճիռն, ըստ որի՝ արձանագրվել են զանգվածայնության և գերիների սպանությունների դեպքեր, և Սրբերենիցայի հետ՝ հիմք ընունելով դրսից ղեկավարվելու փաստը (արձանագրվել է «Բոսնիա-Հերցոգովինան ընդդեմ Սերբիայի և Մոնտենեգրոյի» գործով դատավարության ընթացքում):

Համաձայն ՄԱԿ-ի 1948 թ. «Ցեղասպանության կանխարգելման և պատժի մասին» կոնվենցիայի 2-րդ հոդվածի (շարադրված է ցեղասպանություն հանցագործության հանցակազմը)՝ ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբերին լրիվ կամ մասնակի ոչնչացնելու մտադրությամբ կատարվող գործողություններն են՝

ա. խմբի անդամների սպանությունը,

բ. խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ պատճառելը,

գ. խմբի համար կանխամտածված այնպիսի պայմանների ստեղծումը, որոնք ուղղված են նրա լրիվ կամ ֆիզիկական մասնակի բնաջնջմանը,

դ. խմբում ծնելիության կանխմանն ուղղված միջոցները:

Այս ակտերը լիովին համապատասխանում Բաքվի ջարդերի սցենարին:

Կարծում ենք, ընդունելի չէ Հայոց ցեղասպանության իրականացման վայր համարել միայն Արևմտյան Հայաստանը կամ Օսմանյան կայսրությունը, քանի որ, ինչպես տեսանք, հայերի հանդեպ ցեղասպանություն էր իրականացվում բոլոր այն վայրերում, որոնք հայտնվում էին Օսմանյան բանակի վերահսկողության ներքո: Ինչպես օրինակ՝ Ղարաքիլիսայում 2000 տղամարդկանց մորթելու փաստը, որը ընդհանրություն ունի Սրբերենիցայի ցեղասպանության, այն է՝ 8000 մուսուլման բոսնիացիների սպանության հետ:

Կարծում ենք՝ Բաքվի հայերի ցեղասպանության համար անհրաժեշտ է ընդհանուր մտադրություն փնտրել, քանի որ այն, ըստ էության, լինելով Հայոց ցեղասպանության մի դրվագ, իրականացվեց մինչ այդ գոյություն ունեցող՝ հայերին որպես էթնիկ խումբ ոչնչացնելու ընդհանուր մտադրությամբ:

1918 թվականին ոչ թե թուրք և քուրդ խաժամուժը, այլ թուրքական կանոնավոր բանակն է Բաքու տանող ամբողջ ճանապարհին հրկիզել հայկական բնակավայրերն ու կոտորել խաղաղ բնակիչներին՝ հետագայում նույնը կրկնելով Բաքվում: Բազմաթիվ վկայություններով ու փաստաթղթերով հաստատված այդ փաստը տեղահանությունների «հիմնավորման» թուրքական թղթապանակում տեղ չի թողնում հայերի անհուսալիության մասին կեղծ դրույթի համար: Նախիջևանում և Արևելյան Անդրկովկասում ապրող հայերը Օսմանյան կայսրության քաղաքացիներ չեն եղել, որ անհուսալի համարվեն, ոչ էլ, առավել ևս, վտանգ են ներկայացրել կայսրության կամ Թուրքիայի համար: Նրանց կոտորել են տեղում բացառապես հայ լինելու համար:

Կարծում ենք, որ թե՛ ԱԴՀ-ն, թե՛ Ադրբեջանական ԽՍՀ-ն, և թե՛ ներկայիս Ադրբեջանի Հանրապետությունը Հայաստանին և հայերին վերաբերող հարցերում որդեգրել է անպատիժ մնացած Թուրքիայի ցեղասպան և հակահայ քաղաքակա-

նությունը, և քանի դեռ լիովին չի ճանաչվել ու դատապարտվել Օսմանյան կայսրության իրականացրած հայոց Մեծ եղեռնը, այդ քաղաքական գիծը որևէ կերպ չի փոխվելու:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] Բազիլի հնքնապաշտպանությունը, «Մշակ», Թիֆլիս, հոկտեմբերի 23, 1918:
- [2] «Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-1920 թթ.», Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2003, էջ 158-61, 260-3, 429, 152, 104 (որոշ տվյալներով 14.000) ՀԱԱֆ. 1267, ց. 1, գ. 26, թ. 22-23: «Հորիզոն», Թիֆլիս, № 66, մարտի 29, 1918:
- [3] ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 117, թ. 2:
- [4] **Байков Б.**, Воспоминания о революции въ Закавказье (1917–1920 гг.), Архив русской революции, издаваемый И. В. Гесенемъ, т. IX, Берлин, 1923, с. 143.
- [5] **Ստեփանյան Գ.**, «Հայերի կոտորածներն ու հնքնապաշտպանական մարտերը Նուխի և Արեշ գավառներում 1918-1920 թթ.», Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, № 5, Երևան, 2002, էջ 25: «Աշխատավոր», 1919, մարտի 29, թիվ 61:
- [6] **Ղարիբջանյան Գ.**, «Բաքվի Կոմունան ի նպաստ հայապահպանության», Լրաբեր Հասարակական Գիտությունների, № 1, 1999 էջ 42:
- [7] ՀԱԱ ֆ. 276, ց. 1, գ. 37, թ. 48:
- [8] «Հորիզոն», Թիֆլիս, հոկտեմբերի 30, 1918, № 222:
- [9] **Ստեփանյան Գ.**, Բաքու քաղաքի հայության պատմությունը (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Երևան, 2011, էջ 430-1, 402, 347: **Դադայան Խ.**, Հայերը և Բաքուն, էջ 150:
- [10] Ցեղասպանությունը հասարակական վերլուծությունների կիզակետում, Հոդվածների ժողովածու, Մկրտիչյան Ա. գիտ. խմբագրությամբ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2015, էջ 10, 11-3:
- [11] **Ստեփանյան Գ.**, Հայերի կոտորածները և հնքնապաշտպանական մարտերը Բաքվի նահանգում և թուրք-ադրբեջանական պատասխանատվությունը (1918 թ. սեպտեմբեր, 1920 թ. ապրիլ), Միջազգային գիտաժողով. Հայոց ցեղասպանություն-100. Ճանաչումից՝ հատուցում, Ձեկույցների դրույթներ, Երևան, 2015, էջ 41:
- [12] **Հայրունի Ա.**, Հայկական խնդիրը Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ 1918 թվականին, Երևան, 2013, էջ 166:
- [13] **Ստեփանյան Գ.**, Համազասպ Սրվանձոյանց, Երևան, 2016, էջ 433, 629:
- [14] Պեհպուտ խան Ճիվանշիրի սպանիչ Միսաք Թորլաքեանի դատավարությունը անգլ. Ջինուորական ատեանի առջեւ, Աթենք, 1936, էջ 22:
- [15] ՀԱԱ ֆ. 200, ց. 2, գ. 5, թ. 1-2:
- [16] **Schabas W.**, Genocide in international law: The crime of crimes, 2000, p. 208.

[17] Prosecutor v. Jean-Paul Akayesu, ICTR № IT-96-4-T, p. 523.

[18] Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro, № 185, p. 81. **Մարուքյան Ա.**, Հայոց ցեղասպանության գործով միջազգային դատարան դիմելու հիմքերն ու հնարավորությունները, Երևան, 2014, էջ 55:

[19] ՀԱԱ ֆ. 1267, ց. 2, գ. 94, թ. 103:

[20] **Лудшувейт Е.**, Турция в годы первой мировой войны, Москва, 1966, сс. 228-9, 232:

Գասպարյան Ռուզաննա

1918 Թ. ԲԱՔՎԻ ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ. ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Բանալի բառեր՝ Բաքվի հայեր, ցեղասպանություն, պանթուրքիզմ, համեմատական վերլուծություն, շարժառիթ, գործոններ, Բաքվի և Ելիզավետպոլի հայկական գյուղեր, ցեղասպանության հատկանիշ, ցեղասպանության կոնվենցիա, Բաքվի կոտորածներ:

Հոդվածը նվիրված է 1918 թ. Բաքվի հայերի ջարդերի պատմական և իրավական գործոնների ուսումնասիրությանը: Հասկանալու համար, թե արդյոք կատարվածը ցեղասպանություն է և դատական պրակտիկայում դեպքի առնչությամբ որևէ նախադեպ կա, կատարել ենք տվյալ ժամանակաշրջանի իրադարձությունների մանրամասն քննություն և վերլուծություն: Հարկավոր է հասկանալ, թե արդյոք եղել է հայերին ոչնչացնելու մտադրություն՝ պայմանավորված էթնիկ, ազգային, ռասայական կամ կրոնական հատկանիշներով, քանի որ դիտավորության հանգամանքի բացակայության դեպքում կասկած է առաջանում իրողությունը ցեղասպանություն որակելու, առավել ևս՝ հիմնավորելու տեսանկյունից:

Гаспарян Рузанна

ГЕНОЦИД БАКИНСКИХ АРМЯН В 1918 Г. КАК РЕАЛЬНОСТЬ: ИССЛЕДОВАНИЕ ИСТОРИКО-ПРАВОВЫХ ФАКТОРОВ

Ключевые слова: армяне в Баку, геноцид, пантюркизм, сравнительный анализ, повод, фактор, армянские села в Баку и Елизаветполе, конвенция по геноциду, бакинская резня.

Статья посвящена исследованию историко-правовых факторов резни армян в Баку в 1918г. Для того, чтобы выяснить, является ли произошедшее геноцидом, а также существует ли в юридической практике прецедент подобного рода, мы провели детальное изучение и анализ событий этого периода. Необходимо понять, было ли намерение уничтожить армян по этническому, национальному, расовому или религиозному признаку, поскольку при отсутствии умышленных намерений возникают сомнения в том, что резня квалифицируется как геноцид.

Gasparyan Ruzanna

GENOCIDE OF ARMENIANS IN BAKU IN 1918 AS A REALITY: HISTORICAL AND LEGAL FACTORS

Key words: Armenians of Baku, genocide, pan-Turkism, comparative analysis, motive, factors, Armenian villages of Baku and Elisabethpol, peculiarity of Genocide, Genocide convention, Baku massacres.

The article is devoted to the study of historical and legal factors of the massacre of Armenians in Baku in 1918. In order to find out whether what happened can be identified as genocide, and whether such precedents exist in legal practice, we conducted a detailed study and analysis of the events of that period. It is necessary to understand whether the intention was to exterminate the Armenians on ethnic, national, racial or religious grounds, since in the absence of intentional intentions it is doubtful that the massacre qualifies as genocide.